ՎԱՉԱԳԱՆ ՌԱՖԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների, դոկտոր, պրոֆեսոր
ԳՊՀ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ
Vachik_grigoryan@mail.ru
ORCID ID: 0000-0003-4669-8152
DOI: 10.54503/978-5-8080-1568-5-38

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ՝ ԱԿԱՆԱՎՈՐ ՔՆՆԱԴԱՏ - ՏԵՍԱԲԱՆԸ

Բանալի բառեր՝ *Ս. Սարինյան, փիլիսոփայական դպրոց, տիեզերական սուբյեկտ, ինտուիցիա, գրաքննադատական մեթոդ, գեղարվեստական համակարգ, ավանդույթ:*

Ներածություն

Խոսել քննադատության մասին, նշանակում է խոսել երևույթի բազմակողմանիության մասին: Գրական քննադատությունը միահյուսում է արվեստագիտությունը, գրականագիտությունը, փիլիսոփայությունը, սոցիոլոգիան և այլն: Մեծ քննադատները բոլոր ժամանակներում էլ եղել են ոչ միայն գրականության տեսաբաններ, այլև սոցիոլոգներ, փիլիսոփաներ, արվեստաբաններ: Ահա թե ինչու քննադատությունը չի կարելի դիտել որպես առանձնացված երևույթ:

Քննադատության մասին խոսելիս այն չի կարելի տարանջատել և գրականագիտության պատմությունից՝ առանց մշտական փիլիսոփայական, հասարակական գիտությունների ձեռքբերումները նկատի առնելու:

Վերջնարդյունքում ճիշտ չէր լինի կյանքի իմացության կամ մարդկային հոգու գաղտնիքների ամբողջական գիտելիքներ պահանջել քննադատ-գրականագետից, բայց ամեն պարագայում «պրոֆեսիոնալ» կերպով մտածելն ու նաև զգալը

պարտադիր պայման է գիտության մեջ խոսք ասող գիտնականի համար: «Տվյալ դեպքում մտածել կարողանալը Յու. Բոնդարևի դիտարկմամբ նշանակում է «դատել գրված կանոններով, որոնք առաջադրում է ուսումնասիրվող ստեղծագործության գեղարվեստական համակարգը»[1]: Անշուշտ, նման մոտեցումը հատուկ տաղանդ ու իմացություն է պահանջում գրաքննադատից՝ հայտնի սխեմաները զանց առնելու, հայտնի լուծումները շրջանառելու գայթակղությունից հրաժարվելու իմաստով: Նրա համար առաջնայինը հեղինակի ընկալման դաշտի սահմանների ճշգրտումն ու լուծման ինքնատիպ ուղիների բացահայտումն է: Սերգեյ Սարինյանը տիրապետում է այդ հմտություններին: Բայց նրա գրաքննադատական-գրականագիտական աշխատանքների ոլորտում խնդիրները ոչ այնքան մնում են առանձին հեղինակների երկերի կամ ամբողջ ստեղծագործական աշխարհի վերլուծության սահմաններում, այլ դրանք դիտարկվում են համակարգերի մեջ: Սա պահանջում է լայն մտահորիզոն և ընդհանրացումներ անելու հետևողական ջանքեր:

Տևական աշխատանքն անվանի գիտնականի ոճին հաղորդեց կարևոր որակ: Նրա խոսքը բավականաչափ արագորեն ձեռք բերեց «ազդեցության վստահություն», ինչը մնաց նրա գրքերում ու նաև մեր գիտական հանրության գիտակցության մեջ:

Այսուհանդերձ, ի՞նչն է սարինյանական գիտական խոսքի եթե ոչ ելակետը, ապա գլխավոր պահանջներից մեկը, որով առաջնորդվում է գիտնականը:

Հարցազրույցներում հաճախ է կրկնում գրականագիտական ուսումնասիրությունների կամ քննադատության գիտական պահանջների մասին, ինչը շատ կարևոր է, բայց դա Հրանտ

[1] **Вопросы литературы,** Москва 1979, № 12, с. 230.

Մաթևոսյանի բնութագրմամբ՝ ընդհանուր պահանջ է[2]: Այսուհանդերձ, այս հանգամանքը Սարինյանի համար երբեք չի կորցնում արդիականությունը: Դրա արտահայտման առավել որոշակի ձևը նրա համար մնում են գրականագիտական դպրոցների մասին դատումները:

Սարինյանը քչերից մեկն է մեր տեսաբաններից, ովքեր այս ուղղությամբ բարձրաձայնել են իրենց մտահոգությունները, խոսել են գրաքննադատական, գրականագիտական դպրոցների, դրանց սահմանների, ներկայացվող պահանջների մասին: Գրականագիտական ոլորտի կանոնակարգումը նա համարել է կարևոր գործ: Այդ պատճառով էլ անվանի գրականագետի վերլուծությունները դառնում են ինչպես գրականագիտական աշխատանքների գնահատական, այնպես էլ տվյալ գիտնականին գրականագիտական այս կամ այն դպրոցի մեջ տեղակայելու վկայություն: Այդ ձեռնարկումների մեջ, իհարկե, առաջնայինը փիլիսոփայական դպրոցի մասին դատումներն են: Նա համոզված է, որ գրականագիտության զարգացումը ավելի շուտ գրականության փիլիսոփայությունը բացահայտելու նպատակ պիտի ունենա:

Սարինյանի աշխատանքները, որոնք ընդգրկում են 1950-ականներից մինչև 20-րդ դարի 10-ական թվականները, որ ավելին է, քան կես դարը, իրենց բնույթով խիստ գիտական են:

Առաջին հայացքից, որքան էլ ակադեմիական ելույթներ ու հրապարակումներ ունենար Սարինյանը, նրա խոսքը վերացարկված չէր իրականությունից, հետևաբար այնքան էլ զարմանալի չէր, որ անվանի գրականագետն իրեն դրսևորեց նաև որպես հրապարկախոս գաղափարախոս, որ ընթերցողի հա-

---

[2] **Սարինյան Ս.,** *Հայոց գրականության երկու դարը,* գիրք երրորդ, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2002, էջ 552:

մար բացահայտում էր աշխարհայացքային այնպիսի երևույթներ, որոնք նոր համադրումների մեջ ինքնատիպ էին:

Անգամ առաջին գործը՝ «Քնսադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ» (1955), որտեղից գաղափարական ազդեցությունների հետևանքով հանվել էին շատ էջեր՝ դրանք փոխարինելով խմբագրված էջերով, աչքի է ընկնում գրական երևույթները համակարգելու նպատակադրմամբ: Ընդ որում՝ հենց սկզբից գրականագետը հետաքրքրությունների ոլորտ էր ներառում և արևմտահայ գրականությունը՝ անկախ այն հանգամանքից, որ այն միանգամայն այլ իրողությունների, հասարակական-քաղաքական պայմաններում էր կայանում: Կարևոր էր, որ հայ գրականությունը միասնական էր իր երկու ճյուղերով:

Հետագայում «Ուրվագիծ հայ գրականության պատմագրության» ուսումնասիրության մեջ հիմնավորում և խորացնում էր այս մոտեցումը: «Ամենից առաջ դրանք բխում են նույն ակունքից, ձևավորվել են հայ ժողովրդի բազմադարյան կուլտուրայի վրա, մյուս կողմից երկու հատվածների գրականության զարգացմանը յուրահատուկ են եղել նույն օրինաչափությունները, գաղափարական նույն հիմնաձողերն ու ազգային նույն հոգեբանությունը: Դա մի ժողովրդի միասնական գրականություն է, որը ենթակա չէր տարանջատման, մանավանդ գիտության պատմության ոլորտում»[3]: Ցավալի է, որ Լեոյի թեթև ձեռամբ գրականության այս բաժանումը «տեսականացվեց», հետագայում դրանք կրկնվեցին Վ. Փափազյանի, Հ. Աճառյանի պատմություններում: Գրականության երկու ճյուղերը միասնաբար վերլուծելու, դրանք միասնաբար համակարգելու մղումն

[3] **Սարինյան Ս.,** *Հայոց գրականության երկու դպրը,* հատոր 1,Երևան, «Սովետական գրող» հրատ., 1988, էջ 26:

այդպես էլ մնաց Սարինյանի գիտական հետազոտությունների առանցքում:

Սարինյանն իր ուսումնասիրություններում առանձնացնում է երեք հիմնական շերտ՝ տեսություններ, մենագրություններ, գրականության պատմության համակարգություն:

Այդ վերլուծությունները զերծ են զգացմունքային զեղումներից և առաջ են գնում բացառապես քննական վերլուծության ուղիով՝ երևույթների խորքում բացահայտելով դրանց փիլիսոփայական էությունը:

Մյուս կարևոր որակը ազգային մշակույթի, ներուժի գնահատման ներքին միասնականացման ջանքն է, որ արտահայտվում է Սարինյանի գրականագիտության գիտականացման պահանջի մեջ: Անկախ ժամանակից՝ ինչ զարգացման շրջափուլում է ստեղծվել տվյալ գեղարվեստական գործը, և առավել ևս երբ է ստեղծվել դրա վերաբերյալ ուսումնասիրությունը, այն ունի մի չափանիշ. դա երևույթը գիտական ուղեծրի մեջ պահելու առաջնայնությունն է: Այս որակի անմիջական շարունակությունը կարելի է համարել երևույթները գեղագիտական-փիլիսոփայական մեկնությունների ենթարկելու սկզբունքը, որով առանձնանում են Սարինյանի անգամ գրախոսությունները, էլ չենք խոսում գիտական մենագրությունների մասին, որոնք իրենց համակարգվածությամբ ու երևույթների փիլիսոփայական եզրահանգումներով դառնում են ինքնատիպ երևույթներ մեր գրաքննադատության պատմության մեջ:

Չի կարելի անտեսել, որ խորհրդային շրջանի գրականության մեկնությունն անմիջականորեն առնչվում էր երկրի գաղափարախոսությանը, և սոցիալիստական ռեալիզմի տեսության դրույթներով գրականությունը բացահայտելը մեծ չափով մնում է Սարինյանի աշխատությունների համար կարևոր որակ: Գիտնականի համար առաջնային նշանակություն ունի երևույթ-

ները պատմականության սկզբունքով քննելու հրամայականը, որտեղ «իրերն ու երևույթները ճանաչվում են իրենց զարգացման, լինելության մեջ, դրանք որոշող կոնկրետ պատմական պայմանների հետ ունեցած կապի մեջ»[4]:

Մեզ համար կարևոր է Սարինյանի «Հայոց գրականության երկու դարը» յոթհատորյակը, որտեղ գրական երևույթները գրականագետը վերլուծում է հանգամանորեն: Ականավոր տեսաբանի ուշադրությունից չեն վրիպում գրականության մեջ տեղի ունեցած տեղաշարժերը: Դրանց վերաբերյալ ձևավորված կարծիքները նա քննության է ենթարկում՝ առանց վերապահումների: «Ուրվագիծ հայ գրականության պատմագրության» գրական-պատմական բնույթի ուսումնասիրությունը կապված է հայ նոր գրականության սկզբնավորման շրջանի հետ, որտեղ հարցադրումները պարզաբանում են ընդունված սխալը, ինչը գրականության պատմության ընթացքը ճիշտ ընկալելու, հետևաբար և գնահատելու պահանջ է:

Սարինյանի առաջին աշխատանքը տպագրվել է 1955-ին, երբ գաղափարական սահմանափակումները որոշակիորեն թուլացան: Այդ ընթացքը քարացած ձևերից դեպի ընդգրկուն, կյանքի համապարփակ կերպերին գնալու տևական աշխատանք է, որ պահանջել է բազմակողմանի մոտեցում: Նրան բառի ուղղակի իմաստով հետաքրքրել է գրեթե ամեն ինչ, ինչ առնչվում է հայոց մշակույթին, գրականությանը մասնավորապես: Դժվար է ասել՝ գրականության պատմությա՞ն, տեսակա՞ն հարցերը, գրականության պարբերացմա՞ն, գրականագիտակա՞ն խնդիրները, թե՞ ընթացիկ գրական երևույթներն արժևորելն է Սարինյանի համար եղել առաջնային: Այս ամենը նրա գիտական ուսումնասիրության ծիրում են:

---

[4] **Փիլիսոփայական բառարան,** *Մ.Մ. Ռոզենտալի խմբագրությամբ,* Երևան, «Հայաստան» հրատ., 1975, 467 էջ:

Ակնհայտ է, որ Սարինյանը շարունակում է այն ավանդույթները, որոնք ձևավորվել են մեր գրականագիտության պատմության մեջ, և այս առումով նրա ուսուցիչը Արսեն Տերտերյանն է:

Տերտերյանը միջավայրը, դարը, ժամանակը «օբյեկտիվ տվյալ» է դիտում, իսկ հեղինակի անհատականությունը՝ սուբյեկտիվ տվյալ, սրանց հարակցությունն էլ տալիս է «գրական երկի երևույթը»[5]: Այստեղից էլ մեթոդոլոգիական մյուս սկզբունքը՝ գրականության պատմությունը ուսումնասիրել՝ ըստ «շկոլաների»: Հարկ է նկատել, որ ժամանակին Ա.Վ. Լունաչարսկին ընդգծում էր գրական քննադատության կախվածությունը գրական մեթոդներից ու դպրոցներից: Քննադատության նորմատիվ էտապի ներկայացուցիչները (անտիկից մինչև կլասիցիզմ) առաջին պլան էին մղում աշխատանքների քննադատական գնահատականի անխախտ կանոններ, բացարձակ չափանիշներ:

Տպավորապաշտական քննադատությունը ամբողջությամբ մերժեց այդ կանոնները՝ «յուրաքանչյուրը իր ճաշակը կարող է ունենալ» սկզբունքը առաջ տանելով: Սարինյանական քննադատական մեթոդը, որ ավելի երևույթների փիլիսոփայական կապերի ու համակարգերի բացահայտմանն է ուղղված, հակադրվեց «գեղարվեստական քննադատությանը»՝ դրա տարատեսակներից մեկը դիտելով տպավորապաշտական քննադատությունը:

Տերտերյանը թեև հոգեբանական դպրոցի հետևորդ էր, այսուհանդերձ նրա գրաքննադատությունը հակվեց դեպի փիլիսոփայական դպրոցը՝ փորձելով առավել լայն կապերի մեջ տեսնել գրական երևույթները: Մշտապես որոշակի երևույթնե-

---

[5] **Տերտերյան Ա.**, *Համառոտ դասընթացք*, Երևան, «Պետհրատ», 1922, էջ 3:

րից դեպի ընդհանուրը գնալու հետևողականությունը Սարինյանի գրչին հաղորդեց ակադեմիական խստություն:

Գրականագետի ոճի կարևոր որակներից մեկը գրականագիտության և քննադատության ներհյուսումն է: Պատմական, տեսական հարցերը միասնական պլանով ներկայացնելը սարինյանական ոճի կարևոր առաձնահատկություններից է: Նրա մոտեցումները հավասարաչափ ուժով տարածվում են տարբեր ոլորտների վրա:

Ինչպես գրականագիտության, այնպես էլ քննադատության վերաբերյալ դիտարկումները («Հայ քննադատության նեռածություն») աչքի են ընկնում մտքի խիստ հետևողականությամբ: Վերլուծության բազմաթիվ սկզբունքները ստորաբաժանվում են «երկու խմբի՝ բովանդակային և ձևային: Բովանդակային վերլուծության մեթոդները, ինչպիսիք են սոցիոլագիականը, պատմականը, հոգեբանականը, կենսագրականը և այլն, գրական երկը հետազոտում են նյութական, առարկայական ատաղձի շրջանակներում՝ գեղարվեստական պատկերի իմաստային շերտերում հայտնաբերելով հասարակական, գաղափարական, հոգեբանական, ճանաչողական-վավերագրական ռեալությունների հոսքը: Քննադատության ձևային դպրոցները՝ ֆորմալիզմ, ստրուկտուրալիզմ, «նոր քննադատություն» և այլն, գերազանցապես նախընտրում են պոետիկայի ոլորտը...»[6]:

Ժամանակին տարածում գտած ստրուկտուրալիզմը, որքան էլ փորձեց ընդլայնել վերլուծության շրջանակները՝ միաժամանակ իրեն վերագրելով գրականագիտության գիտականացման ուղու[7] մենաշնորհը, այսուհանդերձ չհասավ ընդհանրացումների այն սահմաններին, ինչին հասել էր փիլիսոփայական դպրոցը:

---

[6] **Սարինյան Ս.,** *Հայոց գրականության երկու դպրը,* հատոր 1, էջ 57:
[7] Նույն տեղում, էջ 58:

Գրական երկը հարկ է քննել ամբողջության մեջ՝ բովանդակային և ձևային վերլուծության բոլոր եղանակների կիրառմամբ, որ հնարավորություն է տալիս ոճական բազմազանության և գեղարվեստական ֆենոմենների համակողմանի հետազոտության հնարավորություն: Ի վերջո Սարինյանը եզրահանգում է, որ «վերլուծական եղանակների բազմազանությունը մշտապես ենթակա է կոմպլեքսային հետազոտության սկզբունքին, որի նպատակն է գրական-գեղարվեստական երևույթները քննել որպես ամբողջություն՝ իր բոլոր համարժեքների միասնության մեջ»[8]:

Գրական երևույթները համընդհանուր կապերի մեջ տեսնելը սարինյանական գրաքննադատական մեթոդի կարևոր առանձնահատկություններից է: Այդ պատճառով էլ զարգացման ընդհանուր միտումը Սարինյանի վերլուծություններում հարաբերակցվում է գրական երևույթների ընդհանուր, համաեվրոպական գրական միտումներին: Այս իմաստով նա երբեք ճգնաժամային պահեր չի ունեցել, դրանք դիպվածային կարելի է համարել: Քանի որ հնարավորությունները ինչպես կյանքի, այնպես էլ գրականության մեջ անսպառ են, հետևապես հետընթացը գրականության ու նաև գրականության գիտության ոլորտներում միայն ժամանակավոր կարող են լինել, իսկ ընդհանուր միտումը մնում է միայն առաջընթացը՝ իր տարբեր ձևերով ու փիլիսոփայական ընկալումներով:

Հավանաբար մեզանում Արսեն Տերտերյանն առաջինն էր, որ շրջանառեց «գրականության փիլիսոփայություն» հասկացությունը իբրև գիտական կատեգորիա[9]: Այստեղից էլ «գեղարվեստական քննադատության» ավանդական ուղղության, այն է՝ «լիբերալ» քննադատության ուտիլիտար մեթոդի հանդեպ «ա-

[8] Նույն տեղում, էջ 59:
[9] Նույն տեղում, էջ 89:

ներկմիտ բանավեճը», որ Տերտերյանը մղեց իր գործունեության ընթացքում: Նույն կերպ Տերտերյանը Տերյանի, Հովհաննիսյանի, Թումանյանի, Շանթի ստեղծագործություններում հայտնաբերում է «տիեզերականը, համամարդկայինը, փիլիսոփայականը»[10]: Եվ հենց այստեղ էլ ի հայտ է գալիս պոզիտիվ քննադատության նեղահայաց մեթոդոլոգիան, որ չափանիշ է դիտում «սոսկ մերկ գաղափարը»: Այսպես ասած՝ «գաղափարի գրականությունը» իշխում էր 19-րդ դարում, և դա համընկնող գնահատական էր պահանջում: Բայց փոխվում է գրականությունը, հետևաբար փոխվում են դրան ներկայացվող պահանջներն ու նաև գնահատականները: Հարկ է նշել, որ Սարինյանը գիտական գործունեության ընթացքում հետևողականորեն հակադրվեց «գեղարվեստական քննադատությանը». նրան, ինչպես Տերտերյանին, անհագստացնում էին գրական երկի, գրական ընթացքի փիլիսոփայական կողմը, հետևաբար գրական երևույթները, որքան էլ պատմական հանգամանքներով ու ժամանակի շնչով պայմանավորված գործեր են, այսուհանդերձ ամեն անգամ Սարինյանը գտնում է դրանց փիլիսոփայական հղացումները արտահայտելու ձևեր՝ ասելիքը ամբողջական համակարգի մեջ դնելու նպատակով:

Այն ծավալուն աշխատանքը, որ կատարեց գրականագետը՝ թե՛ տեսության, թե՛ գրականագիտության, թե՛ գրականության պատմության ու քննադատության ոլորտներում, որոշակիորեն ձևավորեցին ու ամբողջացրին գրականագիտության իր փիլիսոփայական դպրոցը:

Իսկ ի՞նչ զարգացում են ապրել Սարինյանի հայացքները գրական երկի ընկալման, դրանց արժևորման ոլորտներում: 1974-ին Հրանտ Մաթևոսյանի և Սարինյանի հարցազրույցը հետաքրքիր է այս առումով: Որպես գրող՝ Մաթևոսյանը պաշտ-

[10] Նույն տեղում, էջ 99:

պանում է իր՝ արվեստագետի իրավունքն ու արարելու հիմնարար սկզբունքները, Սարինյանը՝ որպես քննադատ՝ սեփական ընկալումները: Քննադատը առաջադրում է կյանքի գիտականացման պահանջ, Մաթևոսյանը երևույթների հայտնագործման ճանապարհին է պատրաստ հայտնաբերել այն, ինչը երբեք էլ նման չի լինի արդեն հայտնի այս կամ այն փիլիսոփայությունը[11]:

Ընդհանուր առմամբ, 70-ական թվականներին Սարինյանը պաշտպանում էր գրականության և փիլիսոփայության փոխհարաբերության հարցերը՝ դրանք դիտելով որպես առանձին գիտակարգեր, դրանց նմանությունների ու տարբերությունների հիմքի վրա էր կառուցում իր խոսքը: «Ես ավարտում եմ իմ զրույցը,- ասում է Սարինյանը Մաթևոսյանի հետ հարցազրույցում,- նույն համոզմամբ, որ գրողի կոչումը ամենից առաջ պարտադրում է բարձր կրթվածություն, ինտելեկտուալ հարստություն, հասարակության և մարդու պատմության գիտական իմացություն: Հայտնի ճշմարտությո՞ւն է: Չեմ առարկում: Բայց եկեք ամենից առաջ հասու լինենք այս ճշմարտությանը»[12]:

20 տարի հետո գրական երկխոսության մեջ (Գրիգոր Հակոբյան-Սերգեյ Սարինյան) հարցադրումները ավելի լայն են ու ավելի բարդացված: Եթե 70-ականներին հարաբերական ապահովության զգացողությունը տարածվում էր բոլոր խնդիրների վրա, ապա 90-ականներին անորոշ, քանդվող հասարակական կարգը ավելացրել է անհանգստության բեռը: Այս հանգամանքը հարկադրում է Սարինյանին առավել ուշադրությամբ դիտարկել խորհրդային շրջանում ստեղծված գրականությունը: Այն մարդիկ, ովքեր մի ժամանակ այլախոհությունը դիտարկել են որպես գեղարվեստական արժեքների գնահատության չափանիշ, սխալվել են, քանի որ դա չափանիշ չէ: Ընդդիմադիր լինել չի

---

[11] **Սարինյան Ս.,** *Գրական երկխոսություն, Հրանտ Մաթևոսյան-Սերգեյ Սարինյան,* Հայոց գրականության երկու դարը, գիրք երրորդ, էջ 544–556:

[12] **Սարինյան Ս.,** *Հայոց գրականության երկու դարը,* գիրք երրորդ, էջ 556:

նշանակում սոցիալիզմի ժխտման դիրքորոշում ունենալ: «Միայն պետք է Մաթևոսյանի հանճարն ունենալ՝ խուճապի չմատնվելու և ասելու, թե ինքը սոցիալիզմը գերադասում է բուրժուական ինդիվիդուալիզմից»: Նա այլխոհ էր: Այս կարգի այլախոհությունը փիլիսոփայական է և հատուկ է խոշոր գեղագետների ինտուիցիաներին: Եթե այս բնույթի այլախոհության մասին է, ապա այդպիսին է ամբողջ համաշխարհային գրականությունը՝ Նարեկացի, Շեքսպիր, Բայրոն, Բալզակ, Հյուգո, Տոլստոյ, Դոստոևսկի, Ռաֆֆի, Թումանյան, Ջոյս և այլք:

Սարինյանը գրականության պատմությունը ճանաչում է պատմական ժամանակի օրինաչափությամբ: Դա եղել է դասական գրականության օրգանական շարունակություն:

Եթե 1950-ականների գրականագիտական աշխատանքներում ավելի զգալի էր գրականությունը փիլիսոփայության մեջ տեսնելու միտումը, ապա 1970-ականներին Մաթևոսյանի հետ ունեցած հարցազրույցում գրականության և փիլիսոփայության՝ որպես հարաբերականորեն անկախ ոլորտների դիտարկումը համարում էր կարևոր: Բայց արդեն 1980–90-ականների գործունեության մեջ առաջնային էր փիլիսոփայությունը գրականության մեջ բացահայտելու սկզբունքը, ինչը լրացուցիչ ջանքեր էր պահանջում: Եվ պատահական էլ չէ, որ 1995-ին խոսում էր երկու գրվելիք գրքերի մասին. «19-րդ դարի հայ գրականության փիլիսոփայությունը» և «Ես՝ ժամանակի հայելիում»: Առաջինի վերնագիրն իսկ բացահայտում է հիմնական միտումը՝ փիլիսոփայությունը բացահայտել գրականության մեջ:

Մեծ ճանապարհ անցած գիտնականը անընդհատ որոնումների մեջ էր: «Թոթափվում ենք գաղափարաբանության նստվածքներից, բայց դեռ չենք կազմավորել գիտական մեթոդաբանության նոր սկզբունքները»[13]: Հետազոտության նախկին

[13] **Սարինյան Ս.,** *Հայոց գրականության երկու դարը*, գիրք երրորդ, էջ 642:

եղանակները՝ կուլտուր-պատմական, սոցիոլոգիական, կառուցվածքային և այլն, սպառել են իրենց: Գրականագիտությունը փիլիսոփայական գիտություն է: Այլևս փոխվել են գրականագիտության և գրականության երբեմնի ըմբռնումները: Հետազոտության մեթոդի մետաֆիզիկական հղումները հարկ է, որ հաղթահարեն էմպիրիկ ընկալման մակարդակը, հակառակ դեպքում դժվար է խոսել գիտական ձեռքբերումներից:

«Ազգային գաղափարաբանություն» եզրույթի սարինյանական ձևակերպումը, որ հանգում է ազգի՝ որպես մոլորակային և տիեզերական սուբյեկտի անհատականության հաստատմանը էթնոմարդաբանական, պատմատարածքային, սոցիալ-աշխարհաքաղաքական և հոգևոր-մշակութաբանական հատույթներում, ստեղծում է երևույթների ընկալման անհամեմատ լայն ասպարեզ՝ լրացուցիչ ուժ հաղորդելով էթնոսի դիմակայության գործընթացին:

Վաստակավոր գիտնականի երկարամյա գիտական գործունեությունը իր անջնջելի հետքն է թողել մեր մշակույթի պատմության մեջ:

Եզրակացություններ

Հոդվածում խոսվում է անվանի գրականագետ, տեսաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի գիտական գործունեության, նրա գրականագիտական, գրաքննադատական աշխատանքների, գիտական մեթոդի առանձնահատկությունների մասին: Անվանի տեսաբան-քննադատը խնդիրները դիտարկում էր համակարգերի մեջ՝ կարևորելով գրականագիտական աշխատանքների կանոնակարգումը: Սարինյանի դիտարկումներում առաջնայինը փիլիսոփայական դպրոցն էր, քանի որ գրականագիտության զարգացումը գիտնականը դիտարկում էր որպես գրականության փիլիսոփայությունը բացահայտելու անհրաժեշտություն: Սարինյանը շարունակում էր հայ գրակա-

նագիտության ավանդույթները՝ ուսուցիչ ունենալով Արսեն Տերտերյանին: Նա հետևողականորեն պայքարեց «գեղարվեստական քննադատության» դեմ՝ դրա տարատեսակներից մեկը դիտելով «տպավորապաշտական քննադատությունը»:

Սարինյանական գրաքննադատական մեթոդը երևույթները դիտարկում է ամբողջության մեջ՝ բովանդակային և ձևային վերլուծության բոլոր եղանակների կիրառմամբ, ինչը հնարավորություն է տալիս ոճական բազմազանության և գեղարվեստական ֆենոմենների համակողմանի հետազոտության հնարավորություն:

Հետևողական աշխատանքով անվանի գրականագետը թե՛ տեսության, թե՛ գրականագիտության, թե՛ գրականության պատմության ու քննադատության ոլորտներում իր խոսքն ասաց: Այս ամենը ձևավորեց ու ամբողջացրեց գրականագիտության իր փիլիսոփայական դպրոցը: Ժամանակի ընթացքում Սարինյանի հայացքներում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ: 1950-ական թվականների աշխատանքներում զգալի էր գրականությունը փիլիսոփայության մեջ տեսնելու միտումը, 1970-ական թվականներին գրականությունը և փիլիսոփայությունը դիտարկվում էին որպես հարաբերականորեն անկախ ոլորտներ, իսկ 1980-90-ականների գործունեության մեջ առաջնային էր փիլիսոփայությունը գրականության մեջ բացահայտելու սկզբունքը:

Անվանի գիտնականի աշխատանքներն իրենց անջնջելի հետքն են թողել մեր գրականագիտության պատմության մեջ:

ВАЧАГАН ГРИГОРЯН
Доктор филологических наук, профессор.
Заведующий кафедрой армянского языка и литературы Гаварского государственного университета

СЕРГЕЙ САРИНЯН - ВЫДАЮЩИЙСЯ КРИТИК И ТЕОРЕТИК

Резюме

Статья посвящена научной деятельности известного литературоведа, теоретика, академика НАН РА Сергея Сариняна, его литературно-критическим работам и особенностям научного метода. Известный теоретик и критик рассматривал проблемы в системном контексте, придавая большое значение упорядочению литературоведческой работы.

В исследованиях Сариняна центральное место занимала философская школа, поскольку он считал, что развитие литературоведения связано с необходимостью раскрытия философии литературы. Саринян являясь учеником Арсена Тертеряна-продолжал традиции армянского литературоведения. Он последовательно выступал против «художественной критики», считая одной из её разновидностей «импрессионистическую критику».

Критический метод Сариняна основывался на рассмотрении явлений в их целостности, с применением всех способов содержательного и формального анализа. Такой подход позволял всесторонне исследовать стилистическое разнообразие и художественные феномены.

Известный литературовед благодаря своей последовательной работе оставил значительный след как в теории, так и в литературоведении, а также в истории и критике литературы. Всё это

сформировало и завершило его собственную философскую школу литературоведения.

Со временем взгляды Сариняна претерпели определённые изменения. Если в трудах 1950-х годов заметна тенденция рассматривать литературу внутри философии, то в 1970-х годах литература и философия рассматривались как относительно независимые сферы. В исследованиях 1980–1990-х годов приоритетным стал принцип выявления философии в литературе.

Труды выдающегося учёного оставили неизгладимый след в истории нашего литературоведения.

***Ключевые слова**: Саринян, философская школа, космический субъект, интуиция, литературно-критический метод, художественная система, традиция.*

VACHAGAN GRIGORYAN
PhD, Droctor of Sciences in Philology, Professor
Head of Armenian Language and Literature
Chair at Gavar State University

SERGEY SARINIAN, A WELL-KNOWN CRITIC AND THEORIST

Abstract

The article deals with the scientific activity of the renowned literary critic, theorist and academician of RA NAS Sergey Sarinyan, his literary and critical works and the peculiarities of his scientific method. The outstanding theorist and critic examined the problems in a systematic context, placing great emphasis on the organization of literary studies.

In Sarinyan's observations, the philosophical school took centre stage, as the scholar saw the development of literary studies as a necessity for the discovery of literary philosophy. Sarinyan continued the tradition of Armenian literary studies and had Arsen Terteryan as his teacher. He consistently spoke out against “artistic criticism”, considering “impressionistic criticism” to be one of its forms.

Sarinyan's method of literary criticism examines phenomena as a whole, using all methods of substantive and formal analysis, which allows for a comprehensive study of stylistic diversity and artistic phenomena. Through consistent work, the renowned literary critic has left his mark in the fields of theory, literary studies, history and criticism of literature. All this formed and completed his philosophical school of literary studies.

Over time, there have been certain changes in Sarinyan's views. While in the works of the 1950s there was a noticeable trend to view literature within the framework of philosophy, in the 1970s, literature and philosophy were considered relatively independent spheres. In the works of the 1980s and 1990s, the priority shifted to identifying philosophy within literature.

The works of the famous scholar have left an indelible mark in the history of our literary studies.

Keywords*: Sarinyan, philosophical school, cosmic subject, intuition, method of literary criticism, artistic system, tradition.*